

**Ալբերտ Մակարեան, «Կրկին Պարոնեանի հետ
(նոր ընթերցումներ)», Եր., «Անտարես», 2018, 306 էջ*:**

Բանալի բառեր – արևմտահայ գրականություն, Յակոբ Պարոնեան, երգիծանք, ժանր, դիմանկար, թատրերգություն, ակնարկ, վիպակ, մանկական գրականություն, գրականագիտություն:

ԺԱ (ԺԷ) փարի. թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԿՎ համահայկական հանդես

Ալբերտ Մակարեանի՝ վերջերս լոյս տեսած «Կրկին Պարոնեանի հետ (նոր ընթերցումներ)» մենագրության խորագրի մէջ արդէն ակնբախ ուրուագծում է մեկնական ոճի հեղինակային սուր հակուածությունը՝ հայեացք 21-րդ դարի դիտանկիւնից, ընթերցման այն եղանակների համադրում, որ Պարոնեան երգիծաբանին դարձնում է շահագրգիռ անհատականություն գրականութեան ազգային ճանապարհի այնքան բանուկ ու բազմաշերտ վերելքներում:

Գրականագէտ Ա. Մակարեանը նոր դէմք չէ պարոնեանագիտութեան ոլորաններում, նախ՝ լրջօրէն հետևում է գրապատմական զարգացումներին, որսում է 19-րդ դարից ձգուող ճանաչողական հատոյթները կամ, ինչպէս ինքն է ձևակերպում, հասու է «երեք դարերի շառաւիղներից» բացուած տարբեր մակարդակների ուսումնասիրություններին, որոնց մի մասը շահեկան է, լրջմիտ, մի մասն էլ մնում է սիրողական վերաբերմունքի սահմաններում: Այս հանգամանքի իմաստաւորումը բերում է արտաքննապէս զարմանալի, իրականում մտահոգիչ հետևութեան՝ հակառակ ընդհանուր տպաւորութեան. այն, որ Պարոնեանի «կեանքի և ստեղծագործութեան մասին ամփոփ ու ամբողջական խօսք դեռևս ասուած չէ»¹. նրա երկերը կարօտ են «նորովի ընթերցման» ու գնահատման²: Սա գրականագէտի արդարամիտ կարծիքն է:

Նոր չէ նաև Յ. Պարոնեանի աշխարհը Ա. Մակարեանի գիտական շարունակական որոնումներում: Աւելին՝ նրա նախասիրությունների մէջ ամենից «հնաբնական» է, ինչպէս խոստովանում է հենց ինքը՝ քննութեան առարկայ գրքի հեղինակը. «Այս մենագրութեան շատ էջեր տարիների ընթացքում հատուածաբար տպագրուել են գիտական զանազան պարբերականներում

*Հոդվածն ընդունուել է տպագրութեան 15.10.2018:

1 Մակարեան Ա., Կրկին Պարոնեանի հետ (նոր ընթերցումներ), Եր., «Անտարես», 2018, էջ 5:

2 Գիտահանրամատչելի ժանր դարձած նման մի կառոյց տրուած է նաև Ռոպէր Հատտէճեանի «Յակոբ Պարոնեան վերադարձաւ» աշխատասիրութեան մէջ (Իսթանպուլ, 1999, 144 էջ), ինչը ցոյց է տալիս ոչ միայն երկու աշխատանքների ընդհանրական գծերը, այլ նաև պարոնեանագիտութեան զարգացման նորագոյն կեանքը՝ հետաքրքիր ու բովանդակալից, իրովի կարևոր հանգրուան ամբողջական Պարոնեանին վերհանելու ճանապարհին:

ու ժողովածուներում...»³: Նոր չէ նաև մեր դիտարկումը, թե գրականագիտության մեջ չկան մեկընդմիջ տրուած բնութագրումներ, ուստի շատ ու շատ երևոյթներ վերագնահատումների ճանապարհ են անցնում:

Ա. Մակարեանի առաջին ծանօթութիւնը «Ազգային ջոջերի» հետ եղել է դեռ երեսուն տարի առաջ, որից յետոյ իւրաքանչիւր «հանդիպում» ընթացել է «կրկին Պարոնեանի հետ» կարգախօսով, որը կարելի է չափորոշել ինչպէս մտերմութեան, այնպէս էլ մանրադիտակի օգնութեամբ, «նոր ընթերցումների» ներքին պահանջով: Առաջին դէպքում անհուն ու չխամրող սէրն է գրողի հանդէպ, երկրորդում՝ նոր ծայրերի բացայայտման ջիղը, որը ամենօրեայ որոնումների արդիւնք է, ստեղծագործական ընդերքին մօտենալու պահանջի վկայութիւն: Անտեսելու չէ Պարոնեանի դիմանկարի ամբողջացման գրականագէտի ձգտումը, որը ներքուստ ծնուել է դեռ այն ժամանակից, երբ նա բանասէրի բժախնդրութեամբ կազմեց ու խմբագրեց «Յակոբ Պարոնեանը ժամանակակիցների յուշերում և վկայութիւններում» աշխատասիրութիւնը (2004):

Եւ եթէ նկատի ունենանք հարցադրումների բազմազանութիւնը, նոր վերարժևորումների ու գրականագիտական վիճայարոյց բացայայտումների շարունակականութիւնը, Յ. Պարոնեանի դժուարագնայ կեանքի դրուագների վերհանումները, մահից յետոյ անձնական արխիւի անդառնալի կորուստը, ապա կարող ենք ուրուագծել այն ծանրագոյն վերելքը, որ ստիպուած եղան յաղթահարել նրա երկերի հին ու նոր մեկնիչները՝ սկսած գրողի ժամանակակիցներից՝ Հրանդ Ասատուր, Մատթէոս Մամուրեան, մինչև Յակոբ Օշական, Արսէն Տէրտէրեան, Գառնիկ Ստեփանեան, Ռոպէր Հատտէճեան, և այսօր՝ Ալբերտ Մակարեան:

Այսուհանդերձ, գրականագէտն այն կարծիքին է, թէ Յ. Պարոնեանի իւրացումը կիսակատար է, բնաւ չանտեսելով իր նախորդների, բնականաբար նաև իր նշանակալի ներդրումը այս ասպարէզում:

Ա. Մակարեանը աշխատասիրութիւնը բաժանել է հինգ գլուխների, որոնց նախորդում է թախծոտ երգիծաբանի ապրած կեանքի տխուր շէշտադրութիւնների վերհանումը («Տխուր երգիծաբանը. կեանքը յուշերի պատառիկներում»): Այնուհետև յաջորդաբար քննուած է դրամատուրգի, դիմանկարչի, ակնարկագրի, վիպասանի և մանկագրի այն հիմնաշաղախը, որով հունցել է ասելիքի նոր ուղղութիւնը, ասելիքի զօրութիւնը: Իսկ «ասելիքը» երգիծաբանի համար ունէր ուշագրաւ հոմանիշ՝ «զակընտէր», այսինքն՝ բուն ստեղծագործութիւնները, որոնց մասին յայտարարում էր. «Հայր մ'եմ...»⁴:

Մեր յիշատակած «պատառիկներում» հեղինակը մի կողմից ամփոփում է գրողի դժուարին ու, յիրաւի, ողբերգական կեանքի դրուագները՝ թշուառ կեցութեան ընտանեկան խորքով, կնոջ և աղջկայ մահերով, որդու՝ Աշոտի դժուարին ապրուստով՝ մասնաւորելով ու գերակայ դիտելով բուն սոցիալական գործօնը: «Պատառիկների» մեջ երևում են Պարոնեան ուսուցիչը՝ աշակերտ Հրաչեայ Աճառեանի տեսողութեամբ, նրա ամենօրեայ հակուածութիւնը խմիչքի հանդէպ ու ամենօրեայ աշխատասիրութիւնը գրասեղանի առջև, ձերմակ արևարգելով լողը՝ «ծովու լոգանքը»: Երևում է, ի հարկէ,

3 Մակարեան Ա., Կրկին Պարոնեանի հետ (նոր ընթերցումներ), էջ 7:

4 Պարոնեան Յ., Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 8, Եր., ՀԱՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 285:

հաշուեմատեաններ կարգի բերող, վարժարաններում հաշուապահություն դասաւանդող, գրասեղանից ակամայ կտրուող էտիրնեցու կերպարը: Գրականագէտն այս հատուածով բերում է հեղինակի կենսապատումը՝ յետոյ այն արդէն իբրև նաև ստեղծագործութեան պատմութիւն տրոհելու առանձին գլուխներում, ինչը երբեմն կարող է յանգեցնել առանձին մէջբերումների կամ գնահատումների կրկնութեան:

Միւս կողմից այս հատուածի խորագրի ընտրութիւնն առանձնացնում է յուշագրութեան հանդէպ Ա. Մակարեանի կայուն նախասիրութիւնը:

Մենագրութեան գիտական արժանիքներից կ'ուզենայինք առանձնացնել այն, որ գրականագէտը «կոյր» սիրահարութիւն-հիացում չունի հանրածանօթ հեղինակի հանդէպ, ինչքան էլ իր Պարոնեանն ու ինքը գիտական ու կենսագրական արահետներում քայլում են կողք կողքի, իսկ դա վկայում է անաչառ ու հատու վերաբերմունքի մասին: Ցայտուն օրինակներից մէկը առաջին՝ «Դրամատուրգը» գլխի «Առաջին պիէսը զուգահեռի մէջ (Կառլօ Գոլդոնի և Յակոբ Պարոնեան)» ենթաբաժինն է, որտեղ «Երկու տէրով ծանայ մը» նշանաւոր երկի տիրոյթում իրաւացիօրէն գրականագէտը որսում է պարոնեանական հանճարի միայն սաղմերը (էջ 39-51):

Մենագրութեան մէջ զուտ գրականագիտական մեկնական աշխատանքի կողքին մեզ գրաւում են տեսաբանական համարձակ եզրայանգումները, ասենք, «Լեռը մարգարէին քով չերթայ նէ՛ մարգարէն լեռան քով կ'երթայ» հայատառ թուրքերէն երկի շուրջ, երբ հասցնում է ընդհանրացնել. «Յակոբ Պարոնեանը փաստօրէն ստեղծել է մի երկ, որն ըստ էութեան չի տեղաւորում մեզ յայտնի որևէ ժանրի սահմաններում: Այն ատելի շատ **միջժանրային ստեղծագործութիւն** է, որին յարմար է տալ **դրամատիկական երգիծապատում** անուանումը»⁵: Նկատենք, որ այդպէս է վարում նաև «Մեծապատիւ մուրացկանները» երկի ժանրային սահմանման առիթով⁶, ինչը պիտի դիտել գրականագիտական որոնումներում տեսաբանական նիւթի խոր մեկնութեան հետևանք:

Ա. Մակարեանի անվիճելի առաւելութիւններից մէկն էլ քանիցս տրորուած ճանապարհներով չգնալու նախապատուութիւնն է: Նա միայն շեշտադրում է պարոնեանական ստեղծագործական այն շերտերը, որոնք, իր տեսողութեամբ վերարժևորման, գնահատումների ու պարզաբանումների անհրաժեշտութիւն ունեն: Հենց թերևս այդ յանձնառութիւնից էլնելով են «շրջանցուած», ասենք, «Պաղտասար աղբար» կամ «Քաղաքավարութեան վնասները» երկերի մանրագնին վերլուծութիւնները: Նոյնը կարող ենք նկատել նաև «Մեծապատիւ մուրացկանները» վիպակի առիթով, որտեղ գիտնականի բուն ատելիքը կենտրոնացած է միայն «յաւելումների» վրայ, վկայ նաև՝ երկի մեկնութեանը յատկացուած փոքր ծաւալը (էջ 243-258):

Որքան էլ ուրոյն ու համոզումների մէջ հաստատուն՝ գնահատելի է այն մօտեցումը, որ Ա. Մակարեանը արժանին է մատուցում պարոնեանագիտութեան անցած ճանապարհի ուղեկիցներին, իրեն նախորդած գիտնականների կատարած հսկայածաւալ աշխատանքին՝ հարկ եղած պարագայում, սակայն, դիպուկ և անվարան վերանայելով նրանց դիտարկումները: Յատ-

5 **Մակարեան Ա.**, Կրկին Պարոնեանի հետ (տր ընթերցումներ), էջ 55 (ընդգծումները՝ բնագրում - Ս.Գ., Ք.Ա.): 6 Տե՛ս նոյն տեղում, էջ 245-246:

կապէս ուշագրաւ է պարոնեանագէտ Գառնիկ Ստեփանեանի կարծիքների հնուտ ու փաստարկուած վիճարկումը՝ կապուած «Նկարագրութիւն դիմաց և բնաւորութեանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» շարքի հեղինակային պատկանելութեան պարզաբանման հետ, երբ նրբօրէն մի կողմ է քաշում «շփոթուած» վարագոյրները. «Այսօր ևս («Նկարագրութիւն...»-ի շուրջ – Ս.Գ., Ք.Ա.) պահպանուող լռութեան պատճառը, կարծում ենք, հոգեբանական է, և ամէնից առաջ այն պէտք է փնտռել Գ. Ստեփանեան գիտնականի պատկառելի վաստակի նկատմամբ առկայ խոր ակնածանքի մէջ: Դոյզն-ինչ չնսեմացնելով և չժխտելով նշանաւոր գիտնականի ներդրումը պարոնեանագիտութեան զարգացման գործում՝ այնուամենայնիւ, կարծում ենք, որ «Ես», «Դուն», «Անիկա» ծածկանունների առիթով յայտնուած նրա որոշ տեսակէտները ներկայումս լուրջ վերարժեւորման ու վերանայման կարիք են զգում»⁷: Իսկ եթէ նկատի ունենանք, որ այդ վիճարկումները նաև ապահովում են Յ. Պարոնեանի գրականութեան նորանոր շերտերի բացայայտումը, ապա դրանք գրապատմական անհրաժեշտութեան արժէք ձեռք կը բերեն:

Նոյն նրբանկատութեամբ գրականագէտը երևոյթը բացատրում է ժառանգորդական կապի ու աւանդոյթին «հաւատարմութեան» դրսևորումներով՝ մասնաւորեցնելով ասելիքն արդէն Հրանդ Ասատուրի հանգամանքով. «...Ինչպէս Գ. Ստեփանեանն է իր յայտնած հապճեպ ու թիւր եզրայանգմամբ ժամանակին ակամայ ազդել պարոնեանագէտների մեծ մասի հայեացքների վրայ, այնպէս էլ խորն է եղել նրա վրայ արևմտահայ նշանաւոր գրաքննադատ Հրանդ Ասատուրի (1862–1928) տեսակէտից բխող հոգեբանական որոշակի ճշումը»⁸:

Ի դէպ, ժառանգորդական կապերի բացայայտումն է «օգնում» մերօրեայ գրականագէտին գրողների ազդեցութիւններն ու տաղանդի աստիճանը որոշել ոչ թէ նրանցից մէկին կամ միւսին նախապատուութիւն տալով, այլ նրանց լուսաբանելով գրապատմական համաբնագրի խորքերում: Օրինակը լուսագոյնս բերում է Յակոբ Պարոնեանի և Երուանդ Օտեանի՝ դիմանկարներ ստեղծելու արուեստի զուգադիր քննութեան ճանապարհին, որտեղ վիճարկում է հանձարներին հակադրելու նախորդ գրականագիտական փորձը: «Հայ երգիծաբանութեան երկու մեծերը,– գրում է նա,– պատմականօրէն էապէս տարբեր ժամանակահատուածներում մայրենի գրականութիւն են բերել իրենց նպաստը, ստեղծել սոցիալ–քաղաքական և հոգեբանական ինքնուրոյն տիպեր, ծաղրի միջոցով նշաւակել արատն ու վնասակարը: Ուստի անիմաստ է խորխորատներ փորել նրանց միջև ու հակակայել միմեանց: Աւելի օգտակար է որոնել այն կամուրջները, որոնք կապում են երկու գրողներին, տեսնել այն մասնայատուկը, որ բնորոշ է նրանց ստեղծագործութեանը, տուեալ պարագայում՝ դիմանկարներին»⁹ Սակայն զուգահեռ քննութիւնը այս պարագայում շատ աւելի տանում է դէպի Ե. Օտեանի գնահատութեան ելքերը, ինչը բժախնդիր լինելու դէպքում կարող ենք տեսնել Գր. Զօհրապի առումով ևս: Թերևս սա գալիս է նրանից, որ մեկ-

⁷ Նոյն տեղում, էջ 221:

⁸ Նոյն տեղում, էջ 225:

⁹ Նոյն տեղում, էջ 171: Տեն նաև «Ազգային ջոջեր»ը զուգահեռների մէջ» ենթագլխի համապատասխան մէկ հատուածը, էջ 168–184:

նակետը բխում է հեղինակի՝ «Արևմտահայ գրական դիմանկարը» աշխատության (Եր., 2002) տրամաբանությունից:

Բնութագրելով Ա. Մակարեանի գրականագիտական մօտեցումները՝ կարելի է առանձնացնել զուգահեռներում կողմնորոշուելու մէկ այլ գնահատելի յատկանիշ՝ նրբերանգների տարբերակման արուեստը: Յայտնի է, որ «Ազգային ջոջեր»ում Պարոնեանը հետևել է որոշակի կանոնիկ-սխեմատիկ կառույցների, բայց գրականագէտը չի մոռանում ընդգծել կերպարների տիպաբանական կառույցի տարբերությունները, եթէ անգամ այդ կերպարները նոյն ազգային-մշակութային բնագավառից են, ինչպէս, ասենք, Խորէն Նար-Պէյի, Մկրտիչ Տիգրանեանի և Անտոն Հասունեանի կերպարներն են յուշում¹⁰:

Ընթերցողի համար բաւական ուշագրաւ «բացայայտում» է նաև Պարոնեանի մանկական գրական ժառանգութեան հետ ծանօթութիւնը նրա խմբագրած «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականի (1872) էջերում, մանաւանդ որ «այսօր արդէն քչերը գիտեն, որ Յակոբ Պարոնեանը հեղինակն է նաև հայ մանկական առաջին պարբերականի»¹¹: Այստեղ նոյնպէս գրականագէտը հաւատարիմ է գրական երկը զուգահեռների մէջ քննելու նախասիրութեանը. Յ. Պարոնեանի մանկագրութիւնը նա տեսնում է համաշխարհային գրական համապատկերում (Շառլ Պերրօ, Գրիմմ եղբայրներ)՝ փոխադրութեան, մշակումի և ինքնուրոյնութեան սահմանների որոշարկումով¹²:

Եթէ **ամփոփելու** լինենք, կարող ենք արձանագրել, որ Ալբերտ Մակարեանի «Կրկին Պարոնեանի հետ (նոր ընթերցումներ)» մենագրութիւնը ամբողջական ու ծանրակշիռ խօսք է՝ ուղղուած հայ խոշորագոյն երգիծաբան, հայ գրականութեան պատմութեան մէջ երգիծաբանական դպրոցի հիմնադիր Յ. Պարոնեանի ստեղծագործական աշխարհի առանձին շերտերի բացայայտումներին: Ճիշդ է հեղինակը իր հաստատումներում, որ այնուամենայնիւ «ներկայ մենագրութիւնը... չի յաւակնում դառնալու Յակոբ Պարոնեանի կեանքին ու ստեղծագործութեանը նուիրուած ամբողջական ուսումնասիրութիւն»¹³:

Առ հասարակ նկատենք, որ գրողի մասին ասելիքը աւարտուն չի կարելի համարել, հենց թէկուզ այն պատճառով, որ ամէն մի «նոր ընթերցում» գրականագէտին շարունակաբար կանգնեցնում է նոր նրբիմաստների վերհանման, նոր կեռմանների մուտքի առջև, որ տանելու է նրան և մեզ դէպի արդէն ծանօթ «անծանօթութիւնների բացայայտումների»:

Եթէ անկեղծ լինենք, Ա. Մակարեանն ամբողջական ընդգրկումի այդպիսի խնդիր չէր էլ դրել իր առջև, թէև նա այդ ճանապարհին է: Իսկ մենք հաւատում ենք, որ չի սպառում Պարոնեանի մեկնութեան մակարեանական զինանոցը, ընդհակառակը՝ մենք նոր փուլ ենք մտնում մեր պարոնեանագէտի հետ:

Սուրէն Դ. Դանիելեան
Քնարիկ Ա. Աբրահամեան

10 Տե՛ս **Մակարեան Ա.**, Կրկին Պարոնեանի հետ (նոր ընթերցումներ), էջ 29-30:

11 Նոյն տեղում, էջ 261:

12 Տե՛ս «Մանկագիրը» գլուխը, նոյն տեղում, էջ 259-309: Նշենք, որ այս գլխի «Հանրայայտ հէքեաթի պարոնեանական փոխադրութիւնը» գրուած է Աստղիկ Սողոյեանի հետ համահեղինակութեամբ:

13 **Մակարեան Ա.**, Կրկին Պարոնեանի հետ (նոր ընթերցումներ), էջ 6:

Սուրէն Գ. Դանիելեան – հեղինակ է ինը մենագրութեան և հարիւրաւոր յօդուած-ուսումնասիրութիւնների: Կազմել և խմբագրել է Սփիւռքի գրականութեանը վերաբերող տասնեակ գրքեր: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում է արևմտահայ դասական և սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը, տեսաբանական հարցադրումները, արևմտահայ գրամշակութային խնդիրները, արևմտահայ կրթական ոլորտը:

Քնարիկ Ա. Աբրահամեան – հեղինակ է մէկ մենագրութեան և երկու տասնեակից աւելի յօդուած-ուսումնասիրութիւնների: Կազմել և խմբագրել է Սփիւռքի գրականութեանը վերաբերող տասնեակ գրքեր: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում է արևմտահայ դասական և սփիւռքահայ գրական հարցադրումները, օտարագիր գրականութիւնը, արևմտահայերէնը:

Summary

**Albert Makaryan, Again with Paronyan (new reading),
Yer., "Antares", 2018, 306 p.**

Suren D. Danielyan
Knarik A. Abrahamyan

Key words – Western Armenian literature, Hakop Paronyan, satire, genre, portrait, dramaturgy, essay, novel, children's literature, literary criticism.

Literary critic Albert Makaryan has spent a lot of time to explore the different sides of creativity of the most outstanding West Armenian writer and playwright Hakop Paronyan. A. Makaryan's new book is continuing the progressive development of good old-fashioned subject, "with new reading" in the newest time, to which questions this article by S. Danielyan and K. Abrahamyan is devoted.

Резюме

**Альберт Макарян, Опять с Пароняном (новые чтения),
Ер., «Антарес», 2018, 306 с.**

Сурен Д. Даниелян
Кнарик А. Абраамян

Ключевые слова – западноармянская литература, сатира, жанр, портрет, драматургия, Акоп Паронян, эссе, новелла, детская литература, литературоведение.

Литературовед Альберт Макарян долгое время исследовал разные стороны творчества крупнейшего западноармянского прозаика и драматурга Акопа Пароняна. Новая книга А. Макаряна является продолжением плодотворных исканий доброй старой темы, «новым чтением» в новое время, о чем и свидетельствует статья С. Даниеляна и К. Абраамян.

REFERENCES

1. **Makarean A.**, Krkin Paroneani het (nor antercumner), Ye'r., «Antares», 2018, ej 5 (in Armenian).
2. **Paronean Y.**, Ye'rkeri zh'ogh'ovac'u tasə hatorov, h. 8, Ye'r., HSSH GA hrat., 1972, ej 285 (in Armenian).

ԳՐԱԴԱՐԱՆԱԳՅՈՒՆՆԵՐ

2019 թվականի հունիս-հուլիս, համալիր-հարթ, 2019 թվ (ժԷ) քաղաք, թիվ 1 (65), համալիր-հարթ

ՀՀ-ի համահայկական հանրապետություն